ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
19.02.2020թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/5-2
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Երևան **<<20>> մարտի 2020թ.**

ՀՀ արդարադատության նախարարությունն, ի դեմս գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար **Նարեկ Ղազարյանի**, այսուհետ՝ **Գնորդ**, մի կողմից, և <**ՍԻՓԻԷՍ ՕԻԼ**> **ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Ա.Դանիելյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Մատակարար**, մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ **Կողմեր**), ղեկավարվելով պետական կարիքների համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև **19.02.2020թ**. կնքված թիվ **ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/5-2** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ և 7-րդ կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Հաշվի առնելով շուկայում բենզինի գնի էական նվազումը և երկրում հայտարարված արտակարգ դրությունը՝ փոխադարձ համաձայնությամբ Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ <բենզին, ռեգուլյար> անվանմամբ գնման առարկայի միավորի գինը՝ միայն երկրորդ եռամսյակի քանակի համար, նվազեցնել և դարձնել **300/երեք հարյուր/** ՀՀ դրամ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականություններն թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է **2(երկու)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

Գնորդ	Մատակարար
ՀՀ արդարադատության նախարարություն	**< ՍԻՓԻԷՍ ՕԻԼ > ՍՊԸ**
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	**Հասցե՝ ք.Երևան, Պուշկինի 1**
ՀՀ ֆինանսների նախարարության	**Բանկ՝ <Էվոկաբանկ> ՓԲԸ**
գործառնական վարչություն	**Հ/Հ՝1660006430550100**
Հ/Հ 900011018547	**ՀՎՀՀ 02665864**
ՀՎՀՀ 02506264	
Ն.Ղազարյան	Ա.Դանիելյան
Ստորագրություն	Ստորագրություն
ԿՕՏ	ԿՕՏ